ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ. ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Գեղագիտական դաստիարակության խնդիրները «Երաժշտություն» առարկայի դասավանդման գործընթացում»

Դպրոց՝ Վաղարշապատի Գ Նժդեհի անվան թիվ 8 հիմնական դպրոց

Մասնակից՝ Լուսինե Աբրահամյան

Ղեկավար՝ Անահիտ Կոշկարյան

Վաղարշապատ 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3-4

ԳԼՈՒԽ 1. ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ.....

1.1 Գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները ուսումնական գործընթացում.....5- 7

1.2 Երաժշտությունը որպես գեղագիտական դաստիարակության կարևոր միջոց.....8 – 11

1.3 Երաժշտության դասում կիրառվող մեթոդներ 12-14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մենք ապրում ենք գիտության և տեխնիկայի աննախընթաց առաջադիմության դարաշրջանում, սակայն և՛ անցյալում, և՛ ներկայում երաժշտությունն է իր կնիքը դնում սովորողի գեղագիտական դաստիարակության և գործունեության վրա: Այն սովորողի գեղագիտական պահանջմունքների և ընդունակությունների դրսևորման ձևերից մեկն է:Երաժշտությունը նպաստում է գեղեցիկը արմատավորելուն և հաստատում այն աշակերտի վարքում, արարքներում:

Երաժշտական կրթությունը մանկավարժության մեջ դիտարկվում է որպես մատաղ սերնդի բարոյական և գեղագիտական դաստիարակության անբաժանելի մաս, որի արդյունքը մշակութային անհատի ձևավորումն է:

Երաժշտության նկատմամբ գեղագիտական վերաբերմունքը նշանակում է երաժշտության գեղագիտական ընկալման ընդունակություն: Երաժշտությունը հարստացնում է աշակերտների երևակայությունը, հիշողությունը գեղագիտական մտապատկերներով, կյանքը դարձնում բովանդակալից, հարուստ և հետաքրքիր: Կրթվել, դաստիարակվել, մարդկային լավագույն հատկանիշներ, մարդասիրական զգացումներ, գեղեցիկի զգացողության գնահատում. ահա այն ամենը ինչ կարող է վերցնել սովորողը այդ տիեզերական աշխարհից:

Երաժշտությունը մարդուն դաստիարակելու ամենահզոր և ամենավառ միջոցներից մեկն է: Երաժշտությունը, երգելը կարող են ավելի լավ արտահայտել մարդու զգացմունքները, քան բառերով և ժեստերով՝ առավել թաքնված, խորը հոգեկան վիճակները՝ հրճվանք, անհանգստություն, տխրություն, հույս, ուրախություն, քնքշություն, երախտագիտություն: Յուրաքանչյուր դարաշրջան ունի ստեղծագործության գեղարվեստական աշխարհը կառուցելու իր սեփական մեթոդները և անձը իր հույզերով և զգացմունքներով ներկայացնելու ուղիները: Կրթության օղակում երաժշտական արվեստը այն միջոցներից մեկն է, որը նպաստում է երեխաների հոգևոր և բարոյական հատկությունների ձևավորմանը և զարգացմանը, քանի որ այն ամբողջությամբ արտացոլում է աշխարհը ամբողջության և գեղեցկության մեջ և միտված է, նախևառաջ, բացահայտելու մարդու ներքին աշխարհը, նրա իդեալները, կյանքի արժեքները:

Երաժշտությունը զգացմունքների լեզու է որ դրսևորում է մարդու հուզական վերաբերմունքը իրականության և գեղագիտական աշխատությունների մեջ գեղեցկի ընկալման ժամանակ : Առանց ռթմի , տեմպի ներդաշնակության , չափի ընկալումների հնարավոր չէ գեղեցիկի զգացմունքի ձևավորումը մարդու մեջ :

Գեղագիտական դաստիարակությունը պետք է սկսել վաղ մանկությունից : Աշակերտների մեջ պետք է զարգացնել տեսնելու , լսելու գեղեցիկն ընկալելու և

գնահատելու ունակությունն: Այդ առումով մեծ դեր ոն խաղում ՝ երգը, պարը, երաժշտական խաղերը :

Աշխատանքի **նպատակն է** բացահայտել սովորողների գեղագիտական դաստիարակության պայմաններն ու միջոցները «**երաժշտություն**» առարկայի միջոցով: Նպատակից բխում են հետևյալ խնդիրները:

•Ներկայացնել գեղագիտական դաստիարակության ուսումնական գործընթացում:

•Մեկնաբանել «Երաժշտություն» առարկայի դերը որպես գեղագիտական դաստիարակության կարևոր միջոց:

•Սիրել և հասկանալ երաժշտությունը:

Հետազոտական աշխատանքը հնարավորությ ուն կտա ու սուցիչ ներին թեման ճիշտ արդյունավետորեն կազմակերպել ու դասերի ընթացքում:

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները ուսումնական գործընթացում:

Գեղագիտությունը կամ էսթետիկան (**հունարեն՝** aisteticos-**զգայությամբ ընկալվող**) թեև որպես գիտություն ձևավորվել է միայն 18-րդ դարում (գերմանացի փիլիսոփա Ա. Գ. Բաումգարտենի կողմից), սակայն որպես իմացության հուզազգացմունքային և գեղեցիկի ճանաչմանն ուղղված ոլորտ գոյություն է ունեցել դեռևս անտիկ շրջանում: Մարդը մշտապես ունեցել է գեղեցիկի պահանջը, գեղեցիկը կազմել է նրա հոգևոր կյանքի անքակտելի մասը: Գեղեցիկը բոլոր ժամանակներում համարվել է նաև իրականության կարևորագույն, ամենահետաքրքիր ու զարմանալի երևույթներից մեկը, որի ճանաչումը, իմացությունը եղել է մարդկային գործունեության (ճանաչողության) հիմնական նպատակներից մեկը: Եվ, բնականաբար, գեղեցիկի ձևավորումը բոլոր ժամանակներում եղել է նաև սերունդների դաստիարակության կարևորագույն բաղադրիչ: Գեղեցիկը ճանաչելու, հասկանալու, զգալու, ինչպես նաև գեղագիտական այլ ունակությունների նախադրյալները մարդուն տրվում են ժառանգաբար: Բայց դրանց ձևավորվումը և զարգացումը հիմնականում իրականացվում է սոցիալական ամենատարբեր օղակներում, որոնց մեջ կարևորագույնը, թերևս, հանրակրթությունն է՝ իր գեղագիտական դաստիարակության բաղադրիչով: Իսկ ի՞նչ է գեղագիտական դաստիարակությունը: Այստեղ բացակայում է միասնական մոտեցումը, և տարբեր հեղինակների կողմից այն բնորոշվում է տարբեր կերպ. որպես իրականության նկատմամբ մարդու գեղագիտական հարաբերության ձևավորման նպատակաուղղված գործընթաց, որպես շրջակա աշխարհի գեղագիտական ընկալման և գեղեցիկի ստեղծման ունակությունների զարգացում, որպես իրականության նկատմամբ մարդու որոշակի գեղագիտական հարաբերության ձևավորում, որպես անձի հուզազգացմունքային և արժեքային գիտակցության և դրան համապատասխան գործունեության ձևավորման գործընթաց և այլն:

Մարդը միշտ ձգտում է դեպի գեղեցիկը: Այս տեսակետից դաստիարակության գեղագիտական և բարոյական բաղադրիչները մոտենում են իրար: Ընդհանրապես, գեղագիտական դաստիարակությունը սերտորեն կապված է, ավելին՝ ինչ-որ իմաստով միահյուսվում է ինչպես բարոյական դաստիարակության, այնպես էլ ինտելեկտուալ զարգացման հետ: Այդ կապերին դեռևս հինգերորդ դարում անդրադարձել է հայ պատմիչ և փիլիսոփա Եզնիկ Կողբացին, ով գտնում է, որ մարդու ստեղծած գեղեցիկը պետք է ծառայի բարուն: Յուրաքանչյուր ուսուցիչ այս պատգամին հավատարիմ, պետք է մտնի դպրոց:Նա պետք է կարողանա ներթափանցել սովորողի հոգու խորքը և բացահայտել աշակերտի ստեղծագործական կողմը:

Նրանց երաժշտական դաստիարակությունը, զարգացումը խիստ կապի մեջ է տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների հետ:Երեխան սկսում է

ուսուցչի հետ մեկտեղ ճանապարհորդել երաժշտության զարմանահրաշ աշխարհում ու իր համար բացահայտել շատ ու շատ գաղտնիքներ: Երգ-երաժշտության հետ շփումը և կարևոր դերը երեխայի համար սկսվում է դեռևս օրորոցից: Յուրաքանչյուր մեկն էլ մեծանում է մայրերի ու տատերի հոգեպարար մեղեդու և օրորների տակ: Այնուհետև շարունակվում է մանկապարտեզում և հատկապես դպրոցում:

Չնայած 2020 թվականից արդեն բոլոր երաժշտության դասագրքերում կան QR կոդեր, համակարգչային սենյակներ, որոնք հեշտացնում են ուսուցչի գործունեությունը, սակայն սովորողի համար սովորելու առաջնային և հեշտ մեթոդը ուսուցչի կենդանի երգչական ձայնն է:

Դպրոցում գեղագիտական դաստիարակությունն իրականացվում է ինչպես դասերի ընթացքում, այնպես էլ դասերից դուրս՝ արտադասարանական աշխատանքների կատարման ժամանակ: Հաշվի առնելով սովորողների տարիքային և ճանաչողական հնարավորությունները՝ ուսուցիչը պետք է որոնի գեղագիտական դաստիարակության իրականացման այնպիսի ուղիներ և ձևեր, որոնք կօգնեն երեխային ճիշտ ընկալելու գեղեցիկը արվեստում, աշխատանքում, բնության մեջ և ամենօրյա կյանքում:

Երաժշտություն առարկան պետք է նպատակաուղղված լինի՝

1) գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության ապահովմանը.

2) սովորողի կողմից արվեստի ստեղծագործությունների, բնության և շրջապատող աշխարհի գեղեցկության և ներդաշնակության հանդեպ զգայուն վերաբերմունքին.

3) հասարակական վայրերում և մշակութային միջոցառումների ժամանակ պատշաճ վարքագծի դրսևորմանը.

4) ստեղծագործական երևակայության և պատկերավոր մտածողության զարգացմանը:

Երաժշտություն առարկայի հիմնական նպատակը գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության ապահովումն է: Գեղարվեստական կրթությունը և գեղագիտական դաստիարակությունն անձի մտավոր և հոգևոր ներուժի բացահայտմանն ու զարգացմանն ուղղված շարունակական գործընթաց է, որն իրականացվում է արվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելու և ինքնուրույն գեղարվեստական գործունեություն ծավալելու միջոցով: Երաշժտության դասավանդումը նպաստում է սովորողի ինքնաճանաչմանը և ինքնարտահայտմանը, նրա մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը, գեղագիտական ճաշակի և բարոյական բարձր չափանիշների ձևավորմանը, հայրենասիրական և մարդասիրական զգացումների արմատավորմանը և կյանքի, շրջապատող աշխարհի, աշխատանքի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսևորմանը:

«Ոչ մի այլ միջոց չի կարող ավելի լավ և ավելի արդյունավետ խրախուսել կրթությանը և լուսավորությանը, քան գեղեցիկ արվեստները՝ պոեզիան, երաժշտությունը և գեղանկարչությունը» - ասել է Խ. Աբովյանը։

Երաժշտության և կերպարվեստի փոխկապվածությունը հուզական մեծ ներգործության արդյունքն է մեր հոգևոր աշխարհի վրա։ Շատ անվանի նկարիչներ իրենց կտավները ստեղծել են լսած երաժշտության ազդեցության տակ։ Երաժշտությունը մեծ ազդեցություն ունի թատրոնում։ Այն ներգործում է հանդիսատեսի վրա և առաջացնում է հուզական վերաբերմունք կատարվող գործողությունների նկատմամբ, դառնում անբաժանելի մասը ներկայացման ժամանակ։

Երաժշտությունը և կինոն միշտ անբաժանելի են եղել միմյանցից։ Երաժշտությունը հուզական երանգ է հաղորդում կինոյում կատարվող իրադարձություններին և դարձնում ավելի տպավորիչ։

Երաժշտության և գրականության գործունեության արդյունքում է ստեղշվել երգը, օպերան, ռոմանսը, օպերետը։ Այս ամենի խոսուն վկան է հայ մեծ գրող Հովհաննես Թումանյանի միտքը. «Բանաստեղծը միայն մարմին է տալիս իր մտքերին ու զգացմունքներին և իր ոգևորությամբ կենդանության շունչ է տալիս բանաստեղշությանը, որ նա ապրի մշտապես։ Բայց որ նա թռչի, դրա համար թևեր են հարկավոր, իսկ թևեր առնել նա կարող է էն կախարդական աշխարհում, որ կոչվում է երաժշտություն»։

«Երաժշտություն» առարկան

որպես գեղագիտական դաստիարակության կարևոր միջոց

Երաժշտական դաստիարակությունը գեղագիտական դաստիարակության բաղադրիչներից է : Հայտնի է , որ երաժշտությունը մշակութային առօրյայի հիմնական բաժիններից մեկն է , ան հնչում է ամբողջ օրվա ընթացքում ՝ առավոտյան մարմնամարզության , ֆիզկուլտուրայի , երաժշտական պարապմունքների ընթացքում :

Սակայն երաժշտական գեղագիտական դաստիարակության ուղղությամբ լուրջ աշխատանք իրականցվում է երաժշտական դասերի ընթացքում :

Երաժշտության դասերը դպրոցում կազմվում են հստակ ծրագրով , որի ընդացքում լուծվում են մի շարք երաժշտական , գեղագիտական և դաստիարակչակա խնդիրներ :

Դրանցից են ՝ երաժշտական լսողության և ռիթմական զգացողության զարգացումը , ինտոնացին մաքրության ապահովումը , տեմբրային լսողության զարգացումը և այլն : Յուրաքանչյուր երգ, լինի պարզ կամ բարդ, փոքր կամ մեծ. պետք է կատարվի գեղարվեստական բարձր ճաշակնով և արտահայտիչ ձևով։ Երրեխաներին պետք է ծանոթացնել կատարողական տարբեր ձևերի, օրինակ՝ տարբեր տրամադրությամբ և տարբեր շեշտերով պետ է կատաել քայլերգերը, քնարական երգերը, պարերգերը և այլն։ Երեխաների երգեցողությունը պետք է լինի գեղեցիկ։ Երեխան սիրում է երաժշտություն և կարողանում է տարբերել գեղեցիկ երգը տգեղից, լավը՝ վատից:

Երաժշտական դասերը կրում են համալիր բնույթ , դա նշանակում է , որ մեկ պարապմունքի ընթացքում երեխաներն առնչվում են գործունեության բոլոր տեսակների ՝

1. Երաժշտության ունկնդրում
2. Երգի կատարում
3. Երաժշտառիթմիկ շարժումներ
4. Նվագ մանկական նվագարաններով

Գեղարվեստական երգեցողության համար գեղեցիկ և ճիշտ առոգանությունը անհրաժեշտ պայմաններից մեկն է։ Երգչական ունակությունների ուսուցման զարգացման պրոցեսում պետք է հատուկ ուշադրություն դարձնել երեխաների ճիշտ առոգանության վրա, առանց դրա գեղարվեստական երգեցողություն լինել չի կարող:Շատերը կարծում են, թե ուժեղ երգեցողության դեպքում է, որ երգն ըմբռնելի է լինում ունկնդրի համար։ Դա սխալ է։ Կարելի է երգել շատ ուժեղ, բայց բառերը վատ արտասանել, և կարելի է երգել մեղմ, բայց բառերը պարզ ու հասկանալի արտասանել։ Հարկավոր է լավ արտասանել ձայնավորները (օ, ա, ու, ի , է), բերանի բացվածքին տալով

արտասանվող հնչյունին համապատասխան և հարմար ձև։Ժողովրդական ավանդույթները աճող սերնդի սոցիալական վարքի արդյունավետ կարգավորիչներ են և արտացոլում են տվյալ ժողովրդի հոգեկերտվածքը, բարոյական նկարագիրը: Յուրաքանչյուր ազգ ավանդույթների միջոցով է գնահատում իրականությունը, ավանդույթներում են արտացոլված ժողովրդի պատմությունը, ազգային ինքնագիտակցությունը: Ավանդույթները դիտարկվում են որպես մշակութային փուլերի՝ կայուն, սերնդեսերունդ կրկնվող և ամրապնդվող կապեր, որոնք գործում են որպես մշակութային մի մակարդակից մյուսին անցման մշակութային ժառանգության ձև և միջոց:

Երաժշտության ուսուցչի մասնագիտական վարպետությունից է կախված թե երգը որքանով մաքուր և գրագետ կկատարվի : երգերի սխալ ուսուցումը կարող է վնասել երեխաների ձայնալարերը :

Ցանկացաց երժշտական ստեղծագործություն տարբեր տարքում կարող է ընկալվել յուրով և նորովի :

Բերենք օրինակ `

4-րդ դասարանի ծրագրով նախատեսված է Կոմիտասի ժողովրդակ թեմաներով ստեղծագործությունների ունկնդրում և ուսուցում :

Ստեղծագոչծության ունկնդրումից հետո , աշակերտները որոշում են երգի բնույթը և տրամադրությունն: Այս նույն ստեղծագործությունը ունկնդրելուց առաջ երեխաները ծանոթանում են Կոմիտասի կերպային , որպես երգահանի : Այունհետև ունկնդրում և մանրամասնորեն վերլուծում են ստեղծագործությունն խոսում դրա բնույթի տրամադրության և նրբերանգների մասին : Երեխաները նշում են որ ստեղծագործությունը «Օրոր» ժողովրդական երգի մշակումն է (Էջ – 8) :

Առաջին դասի ընթացքում երեխաները սովորեցին երգը , ունկնդրեցին երգը դաշնամուր կատարմամբ :Կարելի է ցուցադրել երգի բովանդակությունը պատկերող գեղարվեստական պլակատ։ Երեխաներին կարելի է հանձնարարել մատիտով կամ ներկերով նկարել երգի բովանդակությունը: Որպես տնային աշխատանք հանձնարարվեց ստեղծել փոքրիկ երգ «Օրոր» թեմայով : Հաջորդ դասին նույն երգը հնչեց շվի նվագարանի միջոցով բարդացավ ունկնդրման խնդիրները և խորացվեց ստեղծագործության վերլուծությունը :Երեխաները որոշեցին որ կոմպոզիտորի ստեղծած երաժշտությունը համապատասխանում է տեքստի բովանդակությանը : Մի քանիսը կարողացել էին հորինել թեմային համապատասխան փոքրիկ երգ : Իմպրովիզացիայի բոլոր միջոցները երեխաների մեջ զարգացնում են գեղարվեստական երևակայություն, բարձրացնում երաժշտական գործունեության ակտիվությունը:Նրանք տեղեկացան որ այս ստեղծագործությունը կարող է հնչել նաև այլ նվագարանով : Երկրորդ դասի ընթացքում զգացվեց որ երեխաները երգու են ավելի բնական ձայնով առանց լարվելու , բառերն արտասանելով հստակ : Դասի վերջում

երեխաները նկարելու միջոցով թղթին հանձնեցին երաժշտությունից ստացած իրենց տպավորությունները : Սա բավարարեց արվեստին վերաբերվող ուսումնական առարկաների ինտեգրված ուսուցման պահանջը :

4-րդ դասարանի երաժշտություն առարկայի ընդգրկված «Իմ ժողովրդի երաժշտությունն» թեման ամփոփում է Կոմիտասի կողմից մշակված ժողովրդակա , ծիսական , պանդխտության , հարսանեկան և այլ բնույթի երգեր , որոնք զարգացնում են աշակերտների գեղագիտական ճաշակը :

Որպեսզի դասերն արդյունավետ լինեն և օգուտ բերեն երեխաներին, անհրաժեշտ է ստեղծել հարմարավետ միջավայր: Եթե դասերը ճիշտ են կազմակերպվում, երեխան դառնում է կայուն, հարգալից վերաբերմունք է ունենում ուսուցչի նկատմամբ: Դրա համար հարկավոր է `

1.Ճիշտ երաժշտական նվագակցություն

2.Դասերն անցկացնել խաղային եղանակով :

Օրինակ`«Փիսիկի գանգատը» (խոսք` Հովհ. Թումանյանի, երաժշտ. Դ. Ղազարյանի):

Աշակերտներին բաժանեցի դերերը , հեղինակի դերը կատարեց դասարանը , մի աղջիկ կատարեց լաց լինող փիսիկի դերը , մի ուրիշ աղջիկ մյուս փիսիկի դերը , մի աղջիկ ատարեց տատիկի դերը իսկ մի տղա գող Համոյի :

Երեխաներին մեծ աշխուշություն մցրեց դիդակտիկ պարագաները ` փիսիկների դիմակները , գող Համոյի փայտը :

Երեխաները երգը կատարելիս զգացին որ լաց լինող փիսիկը ներկայացված է տխուր վախեցած ձայնով դրան հակառակ տատիկը և գող Համոն մռայլ խորամանկ , վտանգավոր բնույթով և թավ ձայնով : Աշակերտները հասկացան , որ կոմպոզիտորը երաժշտության արտահայտչամիջոցների և նվագարանների փոփոխությամբ ստեղծում է տարբեր բնույթի կեպարներ : Հեքիաթի առկայությունը երաժշտության մեջ հեշտացնում է երաժշտության ընկալումը : Վերամիավորվում է երեխաների ստեղծագործության գործունեությամբ , երևակայությամբ ու ստանում միանգամայն այլ առավել արտահայտիչ բազմակողմանիորեն հագեցած որակ :

3. Պետք է լսել երեխաների ցանկությունները

4.Պետք է հանգիստ բացատրել, թե երեխան ինչ սխալ է արել:

Երաժշտության ժամերին օգտագործում ենք ուսուցման նոր մեթոդներ: Ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության մի միջոց է, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին արդյունքին:

Դասարանական երգեցողության առավելությունն այն է, որ դրա միջոցով երեխան փոքր հասակից սովորում է երգել, դառնում է երաժշտություն կատարող: Երբ երեխաները իրենք են երգում կամ նվագում, ավելի լավ են զգում և ըմբռնում երաժշտությունը, նրանց մեջ սեր է առաջանում երաժշտության նկատմամբ: Դասարանական երգեցողությունը զարգացնում է երեխաների լսողությունը, երգչական ունակությունները: Պետք է ընտրել այնպիսի երգեր, որոնք իրենց բովանդակությամբ համապատասխանեն երեխաների տարիքին: Երեխաներին հետաքրքրվող երգերն իրենց բովանդակությամբ բազմազան են հայրենասիրական երգեր, աշխատանքային երգեր, թռչունների վերաբերյալ երգեր, պարերգեր և այլն: Երեխաների համար բարդ երգերը նրանց մեջ ատելություն է առաջացնում:

Մեծ ուշադրություն պետք է դարձնել այն բանի վրա, որ երեխաները կարողանան շնչառությունից ճիշտ օգտվել, ունենան հստակ առոգանություն:

Դասարանական երգեցողության ժամանակ պետք է ուշադրություն դարձնել երգ միասին սկսելու և միասին վերջացնելու վրա:

Երեխաների երգչական ունակությունները զարգանում են աստիճանաբար, տարեցտարի ավելի բարդ երգեր և վարժություններ սովորելու միջոցով:

Կարողությունների համակարգում նշվում է. Աշակերտը պետք է՝

1. նախնական պատկերացում ունենա կերպարվեստի՝ գեղանկարչ ությ ան, գծանկարչ ության, քանդակագործության, դեկորատիվ-կիրառական արվեստի ներաժշտության մասին, հասկանա դրանց յուրահատուկ լեզուն և արտահայտչամիջոցները:

2. Իմանա արվեստագիտական որոշ տերմիններ, ժանրերի բնութագրեր.

3. պատկերացում ունենա տարբեր ժանրերում ստեղծագործող որոշ արվեստագետների և նրանց գործերի մասին: Կարողությունների հիմտությունների համակարգում նշվում է՝

• Տեսնել և ընկալել շրջապատող աշխարհի գեղեցկությունն ու բազմազանությունը և այդ արտացոլումն արվեստի ստեղծագործությ ուններում.

• Հասկանալ նկարագրել և վերարտադրել արվեստի ստեղծագործության բովանդակությունը, զգալ տրամադրությունը, արտահայտել անձնական տպավորությ ունները ու զգացմունքները դրա վերաբերյալ:

• Զանազանել արվեստի ստեղծագործություններն ըստ ձևի, արտահայտչամիջոցների և ժանրերի:

• Ճիշտ կազմակերպել և ավարտին հասցնել սեփական աշխատանքը, պահպանել և ճիշտօգտագործել նկարչական պիտույքները, երաժշտական գործիքները, մանկական նվագարանները:

Երաժշտության դասում կիրառվող մեթոդներ

Մեծ հնարավորություններ է տալիս **ՏՀՏ** օգտագործումը: Տեղեկատվական ներկայացումները, տեսանյութերը օգնում են երեխաներին ծանոթացնելու գործընթացը երաժշտությամբ արվեստին հետաքրքիր դարձնելու համար:

Օգտագործելով **ՏՀՏ**-ն, հնարավորություն ենք ունենում տեսողական տեղեկատվություն փոխանցել երեխաներին:

ՏՀՏ-ն կիրառելով երաժշտական դասերը բարձրացնում են երեխաների ճանաչողական հետաքրքրությունը երաժշտության նկատմամբ:

Երաժշտության դասին խթանման փուլում շատ արդյունավետ է օգտագործել «Մտքի քարտեզագրում» մեթոդը: Այս մեթոդ օգնում է որևէ թեմա կամ խնդիր դասակարգել և բաղդատել մեծից մինչև փոքր «տաքսոնների»: Այսինքն ներկայացնել տվյալ նյութը, որպես ամբողջություն, քայլ առ քայլ մասնատել և դասակարգել:



Արդյունքում զարգանում է երեխաների երևակայությունը : Նրանք փորձում են ինքնուրույն ստեղծագործել :

Կանոններ մտագրոհի մեթոդով աշխատելու համար

1.Ցանկացած քննադատության բացակայություն

2. Գաղափարների խրախուսում

3. Մասնակիցների հավասարություն

4. Զուգորդումների (ասոցիացիաների) ազատություն

5. Բոլոր մտքերի գրառում

Թեման, խնդիրը կարելի է ձևակերպել բանավոր, հրահանգի ձևով կամ որպես վերնագիր գրելով գրատախտակին: Անհրաժեշտ է ընդգծել, որ մտագրոհից հետո բոլոր մասնակիցները հնարավորություն կունենան արտահայտելու իրենց տեսակետները ցանկացած մտքի վերաբերյալ: Քննարկումների ժամանակը գալու է ավելի ուշ, այժմ միայն մտքեր են արտահայտվում:Կարևոր է նաև ժամանակային սահմանափակումների հարցը: Լավ կլինի խմբին նախօրոք ասել, որ մտագրոհի համար նախատեսված է, ենթադրենք 8-10 րոպե: Կարևոր է վերջին փուլի քննարկմանը, դասակարգմանը կամ լրացումներին ժամանակ տրամադրելը: Երբ մտքեր արտահայտելու համար տրամադրված ժամանակն ավարտվի, կարելի է հնարավորություն տալ այլընտրանքային տարբերակներ մտածելուն կամ լրացուցիչ ցուցակ կազմելուն: Պակաս կարևոր չէ ընթացքում արտահայտված մտքերի գրանցումը, այնուհետև դրանց հավաքագրումն՝ ի տես բոլորի:

Ազդելով երեխաների հուզաշխարհի վրա «Մտքի քարտեզագրում» **մեթոդը մղում է նրանց դեպի բարին դրականը և** այդ ապրումները երկար ժամանակ են պահպանվում :

Նախադրյալ է ստեղծվում զարգացնելու աշակերտներ երաժշտական ընդունակությունները և ձևավորելու դրական վերաբերմունք այդ արվեստի նկատմամբ :

Կշռադատման փուլ

Այս փուլի ընթացքում սովորողը հանրագումարի է բերում նոր գիտելիքը՝ սեփականացնելով այն:

Այս փուլում աշակերտների գիտելիքները իմի բերվցին ԳՈՒՍ մեթոդով :

Գիտեմ	**Ուզում եմ իմանալ**	**Սովորեցի**
Գիտեմ , որ այս երգ կատարվում է մեղմ հանգիստ հանդարտ տեմպով:	Ուզում եմ իմանալ թե երգի հեղինակը ով է և ում համար է ստեղծել երգը :	Սովորեցի , որ «Օրոր» երգը կարող է հնչել տարբեր նվագարանների օգնությամբ: Սովորեցինք նաև ինչ է ազգայն երաժշտությունը :

Եզրակացություն

Հիմնախնդրի տեսական ուսումնասիրության վերլուծությունն ու ամփոփումը թույլ են տալիս ձևակերպելու հետևյալ եզրակացությունները՝

1.Երաժշտական դասերը դաստիարակում են կամք , կարգապահություն . գեղագիտական ճաշակ և պատասխանատվության զգացում :

2. Երաժշտական դասերը դաստիարակում են փոքրիկ արտիստների , նրանք կարողանում են շուտ կոմնորոշվել և միաժամանակ կատարել մի քանի գործ:

3. Վերլուծվեցին երաժշտական գործունեությունը և գեղագիտական դաստիարակաություն հասկացությունները,

4. Եզրահանգման եկա . որ դասի ընթացքում հնչող երաժշտական գործիքների օգնությամբ զարգանում են այնպիսի ընդունակությունները , ինչպիսիք են լսողությունը, գեղագիտական ճաշակը , երևակայությունը: Երեխաները հասկացան, որ նվագարանների փոփոխությամբ կարելի է ստեղծել տարբեր բնույթի կերպարներ : Երաժշտությունը վերացական արվեստից վերածվեց իրական , շոշափելի գործունեության :Հասկացա որ երաժշտության բնույթը ազդում է երեխաների տրամադրության վրա : Հիմնավորվեց, որ սովորողների գեղագիտական դաստիարակությանը նպաստող լավագույն միջոցը երեխաների մոտ երաժշտական բարձր պատկերացումների, երաժշտական ճաշակի ձևավորումն ու զարգացումն է:

5. Դասի ընթացքում ունկնդրելով , վերլուծելով , երգելով՝ աշակերտները մտան երաժշտական աշխարհը , որտեղ հղկվում է նրանց գեղագիտական ճաշակը :

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան . Յու.Ա, Սահակյան Ա. Ս. «Մանկավարժություն», Երևան, 2005 թ.

2. Հովսեփյան Վ.Ա., Գեղագիտական ուսմունքների պատմություն, Եր.,1979:

3. https://forum.armedu.am/forum

4. Նախաշավիղ 3. 2012 , նախաշավիղ 7.2013 , նախաշավիղ 2.2013

5. Երաժշտության դասագիրք 4-րդ դասարան